



ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ

Ցանկ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ.....	2
ԿՐԹԱԹՈՇԱԿ	2
Ե՞ՐԲ ՎՃԱՐԵԼ	2
ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	3



ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁ*	ՀԲԸՄ անդամ եք	ՀԲԸՄ անդամ չեք
Մասնակից ուսանող	\$133	\$199
Ունկնդիր (կրեդիտ չի ստանում)	\$99	\$149

Վճարելով մեկ դասընթացի համար՝ ուսանողները կարող են տվյալ ուսումնական շրջանի ընթացքում մասնակցել այլ ֆակուլտետի մեկ այլ դասընթացին անվճար հիմունքներով:

* Խնդրում ենք հիշել, որ միայն գումարի 80% -ն է փոխհատուցվում, եթե նախքան դասերի սկսվելը տեղեկացնեք Ձեր մասնակցության դադարեցման մասին:

ԿՐԹԱԹՈՇԱԿ

Կրթաթոշակ կտրամադրվի այն ուսանողներին, ովքեր (ա) ունեն անձնական տարեկան եկամուտ, եթե ուսանողը ֆինանսապես անկախ է, և (բ) ծնողների տարեկան եկամուտ, եթե ուսանողը գտնվում է ծնողների ֆինանսական հոգաձության ներքո:

ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ	ԶԵՂԶ
Մինչև \$10,000	75%
\$10,000- \$30,000	50%
\$30,000 – \$40,000	25%

Ուսումն անվճար կտրամադրվի բացառիկ դեպքերում:

Կրթաթոշակ ստանալու համար, պետք է գրանցման թերթիկի հետ միաժամանակ լրացնել նաև [կրթաթոշակի հայտ](#): Պարտադիր կարգով անհրաժեշտ է ներկայացնել անձնական կամ ծնողների տարեկան եկամուտը հավաստող փաստաթուղթ: Խնդրում ենք ներկայացնել Ձեր կամ Ձեր ծնողների վերջին հարկային հայտագրի կրկնօրինակը: Այն հայտատուները, որոնց երկրներում հարկային հայտագիր չի լրացվում, կարող են ներկայացնել գործատուի կողմից տրամադրված տարեկան եկամուտը հավաստող փաստաթուղթ:

ԵՐԲ ՎՃԱՐԵԼ

Երբ ստանաք Ձեր ընդունելությունը հավաստող նամակը, միաժամանակ Ձեզ կհանդրեն նաև կատարել վճարումը:



Եթե դուք ներկայացրել եք կրթաթոշակ ստանալու հայտ, ապա այդ մասին տեղեկություն կստանաք վերը նշված նամակում, որտեղ և Կրթաթոշակային Հանձնաժողովի որոշման համաձայն Ձեզ կխնդրեն կատարել մասնակի կամ ամբողջական վճարում:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Դուք կարող եք վճարումը կատարել օնլայն՝ կրեդիտ քարտի միջոցով կամ PayPal համակարգով: Եթե այս մեթոդներից և ոչ մեկը Ձեզ հասանելի չէ, ապա խնդրում ենք դիմել ՀՎՀ Ուսանողի ֆինանսական հարցերով զբաղվող գրասենյակ հետևյալ հասցեով sfs@avc-agbu.org մեկ այլ վճարման կարգ որոշելու համար:

Աջակցության կարիք ունեք

ՀՎՀ Ուսանողի ֆինանսական հարցերով զբաղվող գրասենյակը միշտ պատրաստակամ է պատասխանել ուսման վճարի հետ կապված Ձեր հարցերին, ինչպես նաև օգնել Ձեզ կատարել վճարումները:

Հեռ.՝ +37460-612261/60; +37496-512261

Skype՝ avc-agbu

Էլ. Փոստ՝ sfs@avc-agbu.org

Այն ուսանողը, ով դասընթացի ավարտին կստանա “A” գնահատական, հետ կստանա իր լրիվ վճարված ուսման վարձը որպես կրեդիտ ՀՎՀ նույն ակադեմիական տարվա ընթացքում հաջորդ դասընթացին մասնակցելու համար: